



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԴԱՍ 2



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Չեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:



ԴԱՍ 2

ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ




ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ


Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով
ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն
այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱԳՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է
մոտ 5 րոպե:



Ուշադրությամբ
կարդացեք դասի
տեսական մասը՝
օգտվելով բառարանից,
և այն յուրացնելուց հետո
միայն պատասխանեք
ինքնաստուգիչ
հարցերին:
Այս աշխատանքների
համար անհրաժեշտ է
մոտ 200 րոպե:



անցավոր վարքագիծ դրսևորած անչափահասի վերաբերյալ գործ քննելիս՝ դատավորի ամենաբարդ և պատասխանատու որոշումներից մեկը երեխայի կատարած հանցագործությանն արձագանքելու արդյունավետ, պատժի նպատակներն ապահովող, բայց, միևնույն ժամանակ, առավելագույնս «երեխայի լավագույն շահից» բխող քրեաիրավական հարկադրանքի միջոցի, այդ թվում՝ պատժատեսակի, պատժաչափի և դրա իրականացման տարբերակի ընտրությունն է (1):

Նման որոշում կայացնելիս՝ դատավորն առաջնորդվում է այն իրողությամբ, որ մի կողմից առկա է հանցանք կատարած երեխա, ում վարքագիծը մեծապես պայմանավորված է եղել տարիքային առանձնահատկություններով, և քրեաիրավական ներգործության խիստ միջոցների կիրառումը կարող է անդառնալիորեն և բացասաբար անդրադառնալ նրա հետագա կյանքի վրա, անչափահասը կարող է չդիմանալ իր նկատմամբ կիրառվող պատժով պայմանավորված սահմանափակումներին (2),

մյուս կողմից՝ անչափահասի հանցավոր վարքագծի արդյունքում խախտվել են այլ անձի կամ հասարակության իրավունքները, ազատություններն ու շահերը և դրան չարձագանքելը երեխայի մոտ կարող է ձևավորել անպատժելիության զգացում՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ընդ որում, վերջին հանգամանքը հատուկ շեշտվում է նաև Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների (Պեկինյան կանոններ) 2.3-րդ և 17.1-րդ կետերով, որոնք կարևորում են անչափահասի նկատմամբ քրեաիրավական արձագանքման այս կամ այն տեսակն ընտրելիս հասարակության պահանջներին և անվտանգությանն ուշադրություն դարձնելը:

Հետևաբար, դատարանի առաջնահերթ խնդիրը պետք է լինի կատարված արարքին տալ համաչափ պատասխան, ընտրել պատժի կամ քրեաիրավական ներգործության այնպիսի տեսակ, որը հանցանք կատարած անչափահասի համար կլինի իմաստավորված, կապահովի հասարակությունում նրա վերահիստեգրումը, վերասոցիալականացումը և նոր հանցագործությունների կանխումը:

Այս առումով, կարևոր նշանակություն ունի, որ դատարանի կողմից տրվող քրեաիրավական արձագանքն ապահովի անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի նպատակները: ՀՀ գործող քրեական օրենսգիրքը տարբերակում չի դրել չափահասների և անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի նպատակների միջև, որպես պատժի նպատակներ սահմանելով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի ուղղումը և նոր հանցագործությունների կանխումը: Պատժի այս նպատակներն իրենց արտացոլումն են գտել նաև 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում,



Ուշադրություն
դարձրեք դատարանի
առաջնահերթությունների
վրա

այն տարբերությամբ, որ պատժի ենթարկված անձի ուղղման փոխարեն նախատեսվել է ավելի իրատեսական նպատակ՝ անձի վերաօղակակալականացումը: Միևնույն ժամանակ,

Ծանոթացեք օրենսդրական կորամուծությանը:

Նախքան ստորև ներկայացված հատվածը կարդալը՝ փորձեք մտաբերել, թե ինչ սկզբունքներ ու մոտեցումներ գիտեք, որոնք սովորաբար կիրառվում են պատիժ նշանակելիս, ապա ուշադրությամբ ուսումնասիրեք կյուբը և կարևորություն դարձրեք հատկապես անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու սկզբունքներին:

Մտապահեք անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու ընթացքում կարևորվող հանգամանքներ:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածում առանձնացված թվարկվում են անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի նպատակները, մասնավորապես սահմանվում է, որ. «պատժի ընդհանուր նպատակներից բացի, հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատիժը նպատակ է հետապնդում ապահովելու նրա ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացումը, դաստիարակելու նրան և պաշտպանելու այլ անձի բացասական ազդեցությունից»:

Ակնհայտ է, որ կատարված փոփոխությամբ կարևորվում են անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու առանձնահատուկ մոտեցումները, ինչպես նաև հատուկ շեշտվում է երեխայի դաստիարակումը՝ որպես պատժի նպատակ:

Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս՝ պետք է նկատի ունենալ հետևյալը՝

- անչափահասների նկատմամբ կիրառելի են միայն սահմանափակ թվով պատժատեսակներ,
- պատիժ նշանակելիս մանրակրկիտ պետք է քննարկվեն հանցավոր վարքագիծ դրսևորած երեխայի անձնային, ընտանեկան բնութագրիչ առանձնահատկությունները, կարիքները,

այդ թվում՝ հատուկ կարիքները, հանցանքի կատարման պատճառ կամ պայման հանդիսացող հանգամանքները,

- քրեաիրավական ներգործության անխուսափելիության մասին որոշում կայացնելիս՝ պետք է քննարկվի պատժի փոխարեն դատարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունը, իսկ վերջիններիս կիրառման անհնարինության դեպքում՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակների ընտրության հարցը,
- անչափահասի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակի կիրառումը պետք է լինի միայն որպես ծայրահեղ դրսևորում, հնարավորինս կարճ ժամանակահատվածով, ընդ որում՝ պետք է քննարկվի նաև այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորության հարցը:

Ընդհանրապես, հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասի նկատմամբ արդարադատություն իրականացնելիս, առանցքային կարևորություն ունեն այն սկզբունքները և մոտեցումները, որոնք պետք է կիրառվեն պատիժ նշանակելիս:

Անչափահասների նկատմամբ պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց նշանակելիս դատարանները ղեկավարվում են 2 խումբ սկզբունքներով՝

Նախքան հաջորդ հատվածը կարդալը՝ փորձեք մտաբերել, թե ինչ սկզբունքներ ու մոտեցումներ գիտեք, որոնք սովորաբար կիրառվում են պատիժ նշանակելիս, ապա ուշադրությամբ ուսումնասիրեք նյութը և կարևորություն դարձրեք հատկապես անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու սկզբունքներին:

Ուշադրություն դարձրեք
պատիժ նշանակելու
սկզբունքների վրա:

1 Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, որոնք հավասարապես կիրառելի են թե՛ չափահասների, թե՛ անչափահասների նկատմամբ,

2 Անչափահասների նկատմամբ կիրառվող առանձնահատուկ սկզբունքներով, որոնց ձևավորումը պայմանավորված է անչափահասների տարիքային՝ սոցիալական, ֆիզիոլոգիական, հոգեբանական առանձնահատկություններով (3):

1-ին խումբ սկզբունքների թվին են դասվում՝ *օրինականության* (նշանակվող պատժի նախատեսված լինելը քրեական օրենսգրքում), *նշանակվող պատժի որոշակիության* (դատավճռում հստակ պետք է նշված լինի ինչպես պատժատեսակը, այնպես էլ պատժաչափը), *արդարության և պարասխանարվության անհատականացման* (նշանակվող պատիժը պետք է համապատասխանի կատարված արարքին, հանցավորի անձնավորությանը), *հիմնավորվածության* (դատարանի կողմից պետք է հիմնավորվի կոնկրետ գործով այս կամ այն պատժատեսակի կամ քրեաիրավական ներգործության միջոցի նշանակման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը), *մարդասիրության* (պատիժը չպետք է անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառի կամ նվաստացնի նրա արժանապատվությունը) սկզբունքները:

Դրանք արտացոլված են նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածում, ինչպես նաև 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածում՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»¹:

Ներկայացված մոտեցումներից առաջինն արտահայտում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի այն պահանջը, որ դատարանը թե՛ չափահասների, թե՛ անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելիս՝ պետք է ղեկավարվի ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի նույն սանկցիայով, այսինքն՝ սանկցիայի շեմերը նույնական են ինչպես չափահասների, այնպես էլ երեխաների համար: Ներկայիս այս կարգավորումը գործնականում բազմաթիվ խնդիրների է հանգեցնում, օրինակ՝ բնակարանային գողությանն օժանդակած անչափահասի նկատմամբ կիրառելի քրեաիրավական ներգործության միակ տարբերակը լինում է ազատազրկումը չորսից ութ տարի ժամկետով: Նման վիճակը հաղթահարելու նպատակով՝ դատարանը հաճախ կամ կիրառում է օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ, կամ պատիժը պայմանականորեն չի կիրառում:

Ներկայացված հիմնախնդիրն իր լուծումը գտել է 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում, որը սահմանում է հետևյալը.

.....

1. 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում հստակեցվում է, որ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ անզգուշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ:

«մինչև 16 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը:

16-ից մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երկրորդը:

Եթե նշված կանոնները կիրառելիս պատժի ժամկետը կամ չափը պակաս է ստացվում տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից կամ չափից, ապա նշանակվում է ստացված ժամկետով կամ չափով պատիժ»:

Ներկայացված կարգավորմամբ, փաստացի, անչափահասների նկատմամբ կիրառվող սանկցիայի շեմերը փոփոխվել են և սահմանափակվել 14-16 տարեկան անչափահասների համար՝ Հատուկ մասի հոդվածի ստորին և վերին շեմերի 1/3-ով, իսկ 16-18 տարեկանների դեպքում 1/2-ով:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածում տեղ գտած հաջորդ ձևակերպումը վերաբերում է պատասխանատվության անհատականացմանը, ինչի կարևորագույն տարրերից մեկը հանցավորի անձը բնութագրող առանձնահատկությունների, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների վեր հանումն է: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածը պատասխանատվությունը և

պատիժը մեղմացնող հանգամանքների շարքում թվարկում է նաև հանցանքի կատարման պահին հանցավորի անչափահաս լինելը:

Մինչդեռ, 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքը լիովին այլ կարգավորում է նախատեսում, մասնավորապես՝ 100-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները նախատեսող դրույթների առկայությունը բացառում է անչափահասությունը պատիժ նշանակելիս որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք գնահատելը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածում տեղ գտած վերջին ձևակերպումը հանդիսանում է «քրեական ռեպրեսիայի տնտեսման» սկզբունքի դրսևորում, որի էությունն այն է, որ դատարանը միշտ պետք է նախապատվություն տա առավել մեղմ պատժատեսակին, եթե այն բավարար է սոցիալական արդարությունը վերականգնելու, անձի հետագա հանցավոր վարքագիծը կանխելու, նրա վերասոցիալականացման համար: Այս սկզբունքն առանձին կարևորություն ունի անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելիս:

Պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից գատ՝ անչափահասների նկատմամբ կիրառվում են առանձնահատուկ սկզբունքներ և մոտեցումներ: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2008)11 հանձնարարականում սահմանված՝ «Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների» 2-րդ կետի վերլուծությունից հետևում է, որ անչափահասների նկատմամբ պատիժներ կամ նրանց հանցավոր վարքագծին արձագանքելու այլ եղանակներ նշանակելիս, առաջնահերթություն պետք է տրվի դաստիարակչական բնույթի, կանխարգելիչ և վերականգնողական միջոցներին: Օրինակ, եթե հնարավոր է պատժի նպատակներին հասնել անչափահասի նկատմամբ ոչ թե պատիժ, այլ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով, ապա պետք է ընտրվի քրեաիրավական արձագանքման այդ տարբերակը:

Նույն փաստաթղթում նշված են նաև անչափահասների գործերով արդարադատության՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով սահմանված սկզբունքները՝ խտրականության արգելքը, «երեխայի լավագույն շահը», երեխայի բնականոն զարգա-

ցումն ապահովող ներգործության միջոցի ընտրությունը որպես առաջնահերթություն դիտելը, ազատությունից զրկելու հետ կապված ներգործության միջոցները որպես ծայրահեղ միջոց դիտարկելը և դրանց այլընտրանք հանդիսացող միջոցների լայն կիրառությունը, երեխայի արժանապատվությունը հարգելը: Այս սկզբունքների խախտման անթույլատրելիությունը նշել է նաև ՄԻԵԴ-ը՝ Թ-ն և Վ-ն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ Արամայիս Նունուշյանի վերաբերյալ ԵԱՆԴ/0094/01/13 գործի շրջանակներում:

Երեխայի նկատմամբ պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց նշանակելու սկզբունքները, առավել մանրամասն, սահմանված են Պեկինյան կանոնների 17.1-րդ կետում՝

«ա) ներգործության միջոցները միշտ պետք է համարժեք լինեն ոչ միայն իրավախախտման հանգամանքներին և ծանրությանը, այլև անչափահասի դրությանը և կարիքներին, ինչպես նաև հասարակության պահանջներին.

բ) անչափահասի անձնական ազատության սահմանափակման մասին որոշումը պետք է ընդունվի միայն հարցի մանրագնին քննարկումից հետո, և սահմանափակումը պետք է հասցնել հնարավոր նվազագույնի.

գ) անչափահաս իրավախախտին պետք չէ զրկել ազատությունից, եթե միայն նա մեղավոր չի ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու մեջ, և եթե առկա չէ արձագանքման այլ համապատասխան միջոց.

դ) անչափահասի գործի քննության ժամանակ նրա բարեկեցության հարցը պետք է որոշիչ գործոն լինի»:

Անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս՝ առանձնահատուկ են նաև այն նպատակները, որոնց պետք է ձգտի իրավասու մարմինը: Մասնավորապես, Պեկինյան կանոնների 5.1-րդ կետի համաձայն՝ «...անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հատկապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի, որ անչափահաս իրավախախտների նկատմամբ կիրառվող ցանկացած միջոց միշտ համարժեք լինի թե՛ իրավախախտի առանձնահատկություններին, թե՛ իրավախախտման հանգամանքներին»: Ներկայացված դրույթից

հետևում է, որ անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս պետք է ապահովվեն՝

Անչափահասի բարեկեցությունն ապահովելու նպատակով, ինչը ենթադրում է՝ խուսափել զուտ պատժիչ ներգործությունից, հանցագործությանն արձագանքելիս նշանակել այնպիսի քրեաիրավական ներգործության միջոցներ, որոնք կապահովեն հանցանք կատարած անչափահասի կարիքները, կերաշխսավորեն «երեխայի լավագույն շահից» գործելու պահանջը:

«Համաչափության սկզբունքի» ապահովման նպատակով, ինչը ենթադրում է կատարվածին՝ իրավախախտման ծանրությանը, բնույթին, հանցանք կատարած անձի առանձնահատկություններին (առողջական, սոցիալական վիճակին, մտավոր զարգացման, հասունության աստիճանին, ընտանեկան հանգամանքներին, կյանքի պայմաններին և այլն), հանցագործությունից հետո դրսևորած վարքագծին (օրինակ՝ պատճառոված վնասը հարթելը կամ հատուցելը) համաչափ արձագանքի երաշխավորում:

Մինչ հաջորդ հատվածը կարդալը՝ փորձեք մտաբերել, թե ինչ սկզբունքներ ու մոտեցումներ գիտեք, որոնք սովորաբար կիրառվում են պատիժ նշանակելիս, ապա ուշադրությամբ ուսումնասիրեք Նյուֆը և կարևորություն դարձրեք հատկապես անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու սկզբունքներին:

Այս նպատակները, թեև փոքր-ինչ վերացական և անորոշ կերպով, ամրագրում են գտել նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի, ինչպես նաև 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ «անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց վրա այլ անձանց ազդեցությունը...»:

Ներկայացված դրույթից հետևում է, որ ՀՀ-ում դատարանը պետք է ուշադրություն դարձնի

- 1 անչափահասի կյանքի և դաստիարակության պայմաններին, որոշելու՝ թե որքանով են այդ պայմանները (օրինակ՝ ընտանիքի նյութական ծանր վիճակը, ընտանիքում հաճախակի բնույթ կրող վիճաբանությունները, բռնության գործադրումը, երեխայի ծնողի կամ ընտանիքի այլ անդամի կողմից ակոհողի կամ թմրանյութի չարաշահումը, անբարո վարքագիծը, երեխայի նկատմամբ անտարբերությունը, ծնողական հոգատարության, ընտանիքում ջերմ հուզական կապերի բացակայությունը, երեխայի մոտ ամենաթողության մթնոլորտի ձևավորումը) դերակատարություն ունեցել անչափահասի հանցավոր վարքագծի ձևավորման առումով,
- 2 հոգեկանի զարգացման աստիճանին, ինչը ենթադրում է անձի մտավոր, կամային և հուզական ոլորտների գնահատում: Անչափահասներին բնութագրական համարձակությունը, վճռականությունը, անկայունությունը, ինպուսիվությունը, կամակորությունը, էմպաթիայի բացակայությունն են, հաճախ, պայմանավորում նրանց շեղվող կամ հանցավոր վարքագիծը:

Ձեր կարծիքով՝ անչափահասի նկատմամբ արդարադատություն իրականացնելու համատեքստում որո՞նք են երեխայի առողջական վիճակի գնահատման նպատակները:

3 առողջական վիճակին (ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ հոգեկան), քանի որ հանցավոր վարքագծի դրսևորումը կարող է պայմանավորված լինել ինչպես անձի ֆիզիկական արատներով, քրոնիկ հիվանդություններով պայմանավորված հոգեկան վիճակով, այնպես էլ տարաբնույթ հոգեկան խանգարումներով, որոնք ոչ միշտ են հանգեցնում անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության: Բացի այդ, այս գործոնների պարզաբանումը կարևոր է նաև անչափահասի հատուկ կարիքները բացահայտելու և դրանց բավարարումը երաշխավորող քրեաիրավական արձագանքի միջոց ընտրելու համար:

4 անձի այլ առանձնահատկություններին: Այս ձևակերպումը շատ ընդգրկուն է և թույլ չի տալիս հստակ կողմնորոշվել, թե որ հանգամանքները

կամ հատկանիշները պետք է ուսումնասիրվեն՝ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս: Ենթադրվում է, որ դրանք պետք է բնութագրեն, օրինակ, անձի վարքագիծը, արժեքային համակարգը, մոտիվացիոն ոլորտի առանձնահատկությունները, նրա կարիքները, սոցիալական կարգավիճակը (վերաբերմունքն ուսմանը, աշխատանքին, ընկերներին, հասարակությանը, հասարակության համար ընդունելի արժեքային համակարգին, ունակությունը դիմակայելու շրջապատի բացասական ազդեցությանը, մանկական մոտիվացիայով պայմանավորված առանձնահատկությունները՝ արկածախնդրություն, ամեն գնով ինքնահատատման, մեծ երևալու ձգտում, պատճառված վնասը հարթելու ձգտումը և այլն):

5 Երեխայի վրա այլ անձանց ազդեցությունը, որի գնահատումը խիստ կարևոր է: Երեխային բնութագրական է ներշնչվողականությունը, ուրիշի ազդեցության տակ ընկնելը, հեշտությամբ գայթակղվելը, որոնք էական դեր են խաղում նրա հանցավոր վարքագծի մեխանիզմում: Ընդ որում, «այլ անձ» ասելով պետք է հասկանալ ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս անձի: Պարզապես անհրաժեշտ է, որ անչափահասը ոչ թե պարզապես գործի այլ անձի հետ, այլ նրա վարքագիծը պայմանավորված լինի այդ անձի բացասական ազդեցությամբ:

Փաստորեն, նշված գործոնների ուսումնասիրությունն է դատարանին թույլ տալիս վեր հանել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածում ուղղակիորեն ամրագրում չստացած պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները և նշանակել մեղմ պատիժ:

Անչափահասի կողմից կատարված հանցանք քննելիս՝ «երեխայի լավագույն շահից» բխող որոշում կայացնելու համար՝ դատարանը պետք է ամբողջական տեղեկատվություն ունենա երեխային, նրա սոցիալական կարգավիճակը, կարիքները բնութագրող հանգամանքների, ինչպես նաև ՀՀ-ում հասանելի, հանցանք կատարած երեխաների համար նախատեսված վերականգնողական, կրթական բնույթի ծրագրերի վերաբերյալ:

Ըստ Ձեր տեղեկացվածության՝ արդյո՞ք ՀՀ-ում առկա են անչափահասի մասին համալիր տեղեկությունների հավաքագրման միջոլորտային ընթացակարգեր:

Երեխայի վերաբերյալ տեղեկությունները դատարանը կարող է ստանալ անչափահասի ծնողներից, հարևաններից, ընկերներից, ուսուցիչներից կամ այլ անձանցից ու մարմիններից: Ճիշտ կլիներ, որ նման տեղեկությունները հավաքելով զբաղվեր ոչ միայն դատարանը, այլ դա զուգակցվեր հատուկ մասնագետի (օրինակ՝ սոցիալական աշխատողի/սոցիալական մանկավարժի, հոգեբանի, պրոբացիոն ծառայության աշխատակցի) կողմից անչափահասի վերաբերյալ պատրաստված զեկույցով, որը թույլ կտար առավել հավաստի ներկայացնել անչափահասի հոգեբանական բնութագիրը, նրան բնութագրող բոլոր առանձնահատկություններն ու կարիքները: Ներկայումս, սակայն, համապատասխան կանոնակարգումների բացակայության պատճառով, ՀՀ-ում նման պրակտիկա չկա:

Անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելիս՝ կարևոր նշանակություն ունեն նաև պատիժ նշանակելու հատուկ կանոնների կիրառությունը, մասնավորապես՝ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու հարցը: ՀՀ գործող քրեական օրենսգիրքն անչափահասների առումով այս հարցը հստակ չի կանոնակարգում, այլ միայն սահմանում է հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու դեպքում անչափահասների նկատմամբ կիրառելի ազատազրկման վերին շեմը՝ դատավճիռների համար 12, հանցագործությունների համակցությամբ՝ 14-16 տարեկանում հանցանք կատարելու դեպքում 7, 16-18 տարեկանում հանցանք կատարելու դեպքում՝ 10 տարի ժամկետով: Այնուհանդերձ, վիճելի են այն դեպքերը, թե որ կանոնը պետք է կիրառվի և ինչ պատժաչափ պետք է կիրառվի, եթե համակցության մեջ մտնող հանցանքներից մեկն անչափահասը կատարել է 14-16, մյուսը՝ 16-18 տարիքային շեմերի տիրույթում (4):

Ծանոթացեք
օրենսդրական
նորամուծությանը

Այս առումով առավել հետևողական է 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքը, որի 102-րդ հոդվածը սահմանում է անչափահասի նկատմամբ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելը, այն է՝

«1. Մինչև 16 տարին լրանալը միայն միջին ծանրության կամ ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ ազատագրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 3, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձանց նկատմամբ՝ 7 տարին:

2. 16-ից մինչև 18 տարին լրանալը միայն միջին ծանրության կամ ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ ազատագրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 5, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձանց նկատմամբ՝ 10 տարին:

3. Եթե մինչև 18 տարին լրանալը կատարված հանցագործությունների համակցությունն ընդգրկում է առանձնապես ծանր այնպիսի հանցանք, որը կապված է դիտավորությամբ կյանքից զրկելու հետ, ապա անչափահասի նկատմամբ ազատագրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 12 տարին:...

4. Եթե հանցագործությունների համակցության մեջ մտնող հանցանքներից մեկը կամ մի քանիսը կատարվել են սույն հոդվածով նախատեսված ավելի ցածր, իսկ մյուսը կամ մյուսներն ավելի բարձր տարիքում, ապա հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը որոշելիս կիրառվում է ավելի բարձր տարիքի համար սահմանված կանոնը»:

Նույն օրենսգրքի 103-րդ հոդվածը կանոնակարգում է դատավճիռների համակցության դեպքում անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելը, այն է՝

1 Դատավճիռների համակցությամբ վերջնական պատիժը, եթե դա կապված չէ ազատագրկման հետ, չի կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքով՝ պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն չափը:

2 Դատավճիռների համակցությամբ ազատագրկման ձևով վերջնական պատիժը վերջին հանցանքը կատարելու պահին 16 տարին չլրացած անձանց նկատմամբ չի կարող գերազանցել 10, 18 տարին չլրացած անձանց նկատմամբ՝ 12, իսկ 21 տարին չլրացած անձանց նկատմամբ՝ 25 տարի ժամկետը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը կատարում է այնպիսի հանցանք, որի համար նախատեսված է նաև ցմահ ազատագրկում:

Պատիժ նշանակելու առանձնահատուկ կանոններին է վերաբերում նաև պատիժ նշանակելն արագացված դատաքննության պարագայում, ինչն ՀՀ քրեական օրենսգրքում տեղ է գտել համաձայնեցման վարույթի տեսքով: Այնուհանդերձ, Անդրանիկ Առուսատմյանի վերաբերյալ ՏԴ/0145/01/11 գործով ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է անչափահասների նկատմամբ արագացված դատաքննության կիրառման արգելք, հետևաբար արագացված դատաքննության, ավելի ճիշտ՝ համաձայնեցման վարույթի դեպքում պատժի նշանակման առանձնահատուկ կանոններն անչափահասներին վերաբերելի չեն:



- 1 Անչափահասի պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում.
Հեռաուսուցման ձեռնարկ, դաս 8,
<https://www.justiceacademy.am/assets/attachments/DAS82017anchapahas.pdf>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 2 Степашин В.М. Особенности назначения наказания несовершеннолетним.
Вестник Омского университета. Серия: Право. 2009. № 1 (18), էջ 83,
<https://cyberleninka.ru/article/n/osobennosti-naznacheniya-nakazaniya-nesovershennoletnim>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.);
Семернева Н.К. Особенности уголовной ответственности несовершеннолетних// Уголовное право. Общая часть/ Под ред. И.Я. Козаченко, З.А. Незнамовой. М., 1997, էջ 481,
<http://lawlibrary.ru/izdanie21461.html>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 3 Адактилиди Ю.Д. Общие принципы назначения наказания несовершеннолетним.
Новое слово в науке и практике: гипотезы и апробация результатов исследований. 2012. № 2, էջ 146,
<https://elibrary.ru/item.asp?id=20377536>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 4 Беспалов Р.В. Назначение наказания несовершеннолетним при множественности преступлений. автореферат диссертации на соискание

ученой степени кандидата юридических наук/ Северо-Кавказский научный центр высшей школы. Ростов-на-Дону, 2004;

Долгополов К.А. К вопросу о назначении наказания несовершеннолетним по совокупности приговоров. Вестник СевКавГТИ. 2014. № 16. էջ 146;

Долгополов К.А. Назначение наказания несовершеннолетним по совокупности преступлений. Международная научно-практическая конференция. Северо-Кавказский гуманитарно-технический институт (Россия); Словацкий университет святых Кирилла и Мефодия (Словакия); Северо-Кавказский федеральный университет, Юридический институт (Россия), էջ 154;

Криволапова Д.А. Назначение наказания несовершеннолетним по совокупности преступлений. В сборнике: Актуальные проблемы современной науки. V Международная научно-практическая конференция в двух томах. 2016, էջ 183:

ԲԱՌԱՐԱՆ



Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 15 րոպե:

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ — Երեխայի անվտանգության ապահովումը և կարիքների (առաջնահերթ կամ հատուկ) բավարարումն է:

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԿԱՐԻՔՆԵՐ — Երեխայի կյանքի ու բնականոն զարգացման համար անհրաժեշտ կենսաֆիզիոլոգիական, սոցիալական պահանջմունքներն են, որոնց թվին են դասվում՝ ֆիզիոլոգիական կարիքները (առողջ սնունդ, ջուր, քուն, կացարան, մարդկային վերաբերմունք), անվտանգության և անձեռնմխելիության հետ առնչվող կարիքները (վտանգներից, բռնությունից և անտեսումից պաշտպանված լինելը, ֆինանսական անվտանգությունը, առողջապահական ծառայությունների հասանելիությունը), սոցիալական կարիքները (սիրված, ընդունված լինելու, տարեկիցների հետ շփվելու), արժանապատվության, հարգված լինելու կարիքը (քաջալերումը, հավանության արժանանալը, ծնողների, ընկերների, ուսուցիչների կողմից հարգանքի արժանանալը), ինքնադրսևորումը (նախասիրություններ, ստեղծագործել):

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ — Երեխայի կյանքի ու բնականոն զարգացման համար անհրաժեշտ կենսաֆիզիոլոգիական, սոցիալական պահանջմունքներն են, որոնց գոյությունը պայմանավորված է երեխայի «ինչ-որ բան» անելու, օրինակ, հիվանդություններով պայմանավորված՝ որոշակի տեսակի սնունդ կամ ըմպելիք օգտագործելու, ֆիզիկական վիճակով պայմանավորված՝ ազատ տեղաշարժվելու, սոցիալիզացիայի խնդիրներով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություն հաճախելու, հոգեբանական խնդիրներով պայմանավորված՝ փակ տարածությունում գտնվելու անկարողությամբ:

ԵՐԵՒԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀ — Երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունք է, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ հետապնդելով առավելագույնս երաշխավորել երեխայի անվտանգությունը, ինչպես նաև նրա առաջնահերթ կարիքների բավարարումն ու խնամքը: Երեխայի լավագույն շահը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքով, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ երեխայի տարիքը, նրա հասունության մակարդակը, մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի հնարավորությունը, ծնողների ներկայությունը կամ բացակայությունը, նրանց հետ հուզական կապը, երեխայի զարգացման համար ծնողի/ների, ընտանիքի անդամների հետ անվտանգ պայմաններում շփվելու կարևորությունը, երեխայի սոցիալական շփումը (դպրոց, ընկերներ, մասնակցություն մշակութային կյանքին, սոցիալ մշակութային խմբակներին և այլն), ինչպես նաև երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր, կրոնական կապերը:

ԷՄՊԱԹԻԱ — Մեկ այլ անձի հոգեվիճակն ընկալելու, նրան ապրումակցելու ընդունակությունն է:

ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԻԾ — Տվյալ հասարակության մեջ ընդունված նորմերին հակասող վարքագիծ է:

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ — Միջոցառումների համալիր է՝ ուղղված անձի խաթարված կամ կորցրած հասարակական կապերի և հարաբերությունների վերականգնմանը, ինչը թույլ է տալիս նրան առանց կոնֆլիկտների ապրել սոցիալական միջավայրում և հարաբերվել այլ անձանց հետ, զերծ մնալ հանցավոր վարքագծի դրսևորումից:

ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ — Իրավական, կազմակերպական և սոցիալ-հոգեբանական միջոցառումների իրականացման գործընթաց է՝ ուղղված իրավախախտում կատարած անձի արժեքային կողմնորոշումների, վարքագծի նորմերի, մոդելների՝ հասարակության կողմից ընդունելի տարբերակների վերափոխմանը: